ՀԱՅԵՐԸ ԵՎ ԼԵՎԱՆՏՅԱՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ XVII ԴԱՐՈՒՄ

Պատմ. գիտ. դոկտոր Վ. Ա. ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

Միջին դարերում և նոր ժամանակներում Լևանտ էին անվանում արևելյան միջերկրածովյան երկրները՝ Փոքր Ասիան, Սիրիան, Լիբանանը, Պաղեստինը, Կիպրոսը, Հունաստանը, Եգիպտոսը և այլն։ Հնագույն ժամանակներից սկսած Լևանտը հանդիսացել է միջազգային առևտրափոխանակության կարևորագույն հանգույցներից մեկը։ Միջին դարերում խաչակրաց արշավանքների հետևանքներից մեկը հանդիսացավ Լևանտի հետ Եվրոպայի անմիջական ու մշտական կապերի հաստատումը։ Այդ ժամանակ Արևելքի երկրներ տանող գլխավոր առևտրական ճանապարհը դարձավ Միջերկրական ծովը։ Աննախընթաց հաջողություններ ձեռք բերեց առևտուրը Իրանի, Հունաստանի և Արաբիայի հետ։ Իտալական առևտրական քաղաքները՝ Վենետիկը, Ջենովան, Պիզան, Ամալֆին հսկայական օգուտներ էին ստանում Արևելքի և Եվրոպայի միջև կատարվող առևտրից։

Հայտնի է, որ միջերկրածովյան երկրների տնտեսական աշխուժացումը անմիջականորեն իր արտացոլումն գտավ Կիլիկյան Հայաստանում, որը հանդիսանում էր միջերկրածովյան առևտրի խոշորագույն կենտրոնը։ Կիլիկիայի հայ խոշոր վաճառականությունը սերտորեն ընդգրկվեց համաշխարհային առևտրի մեջ և իր այդ դիրքերը պահպանեց ընդհուպ մինչև Կիլիկիայի հայկական թագավորության կործանումը (1375 թ.)։

Այս նավահանգստի անշքանալուց և առևտրական կարևորությունը կորցնելուց հետո ևս հայերը չդադարեցին ակնառու դեր խաղալ լևանտյան առևտրում։ Հարմարվելով նոր ստեղծված պայմաններին, նրանք շարունակում էին գործուն մասնակցություն ունենալ Արևելքի և Արևմուտքի միջև միջազգային ապրանքափոխանակությանը։ Այդ ժամանակ համաշխարհային առևտրի գլխավոր ուղիներից մեկն է դառնում Այաս—Թավրիզ և Թավրիզից Սիրիայի նավահանդիստները տանող առևտրական զարկերակը, որի միջոցով և իրականացվում էր Լևանտի կապը մահմեդական Արևելքի, ինչպես նաև Հնդկաստանի և Չինաստանի հետ։ Անդրասիական այդ առևտրի գլխավոր լծակները գտնվում էին Իտալիայի վաճառականների ձեռքում, որոնք ոչ մի կերպ չէին հանդուրժում տեղական մրցակիցներին։ Թերևս այդ է պատճառը, որ Կիլիկիայի հայկական պետականության անկումից հետո հայ վաճառականները գլխավորապես հաստատվում են Ղրիմում։ Մինչև 1475 թ., այսինքն թուրք-օսմանների կողմից Ղրիմի գրավումը, ղրիմահայ վաճառականները մրցակիցներ չունեին Լևանտի ու Արևելքի միջև կատարվող ցամաքային քարավանային առևտրում։ Դժվար է գերագնահատել նրանց խաղացած դերը նաև Արևմուտք-Արևելք առևտրական կապերում։

Փոքր Ասիայում, Բալկաններում և Հյուսիսային Աֆրիկայում թուրքական նվաճումները և հատկապես 1453 թ. Կ. Պոլսի գրավումն ու բյուզանդական կայսրության վերջնական անկումը Եվրոպայի արևելյան առևտրի համար իսկական աղետ եղան։ Սուլթանի տիրապետության տակ անցավ Ադրիատիկ ծովի ու Հունգարիայի սահմաններից մինչև Պարսից ծոց հասնող առևտրական ուղին։ Իսկ Տրապիզոնի կայսրության (1461 թ.) և Ղրիմի նվաճումից հետո Սև ծովը ուղղակի վերածվեց թուրքական «ներքին լճի»։

Օսմանյան սուլթանների տնտեսական քաղաքականությունը աչքի էր ընկնում ծայրահեղ կամայականությամբ։ «Յանիչարները վատ էին կողմնորոշվում առևտրական հարցերում և անպարկեշտ կողոպուտների թուրքական մեթոդները

իտալական վաճառականներին հասցնում էին հուսահատության»[1]։ Վենետիկցիները ստիպված էին կամ հսկայական մաքսատուրքեր վճարել և կամ ընդմիշտ հեռանալ Մերձավոր Արևելքի ու Էգեյան ծովի իրենց առևտրական հենակետերից, իսկ ջենովացիները ուղղակի վռնդվեցին օսմանյան տիրույթների սահմաններից։ Այսպիսով Եվրոպան կտրվեց արևելյան շուկաներից։ Սակայն այդ հակաբնական խզումը չէր կարող տևական բնույթ կրել։ Վերընթաց զարգացման ուղի բռնած Արևմուտքը կենսականորեն զգում էր Արևելքի հետ առևտրատնտեսական կապեր ունենալու պահանջը։ Եվրոպայի համար այլ երկընտրանք չկար. բացի ծագումով արևելքցի միջնորդ վաճառականների օգնությանը դիմելը։ Դրա հնարավորությունը պայմանավորված էր նրանով, որ այդ վաճառականները գտնվում էին օսմանյան տիրապետության ներքո և նրանց առևտուրը եկամտաբեր էր սուլթանական գանձարանի համար։ Այսպիսով հայ վաճառականների համար վերստին առևտրական լայն գործունեություն ծավալելու հնարավորություն է ստեղծվում։ Ընդ որում, եթե սևծովյան ուղու երթևեկության ժամանակ հայերը հանդես էին գալիս առավելապես Վենետիկի և Ջենովայի առևտրականների գործակցի դերում, ապա այժմ նրանք սկսում են գործել որպես ինքնուրույն միավոր։ Նոր պայմաններում նրանց անսպասելի մուտքը համաշխարհային շուկա զարմացրել է ժամանակակիցներին։ Արտահայտելով այդ տրամադրությունները, գերմանացի փիլիսոփա Կանտը գրել է. «Մեկ այլ քրիստոնյա ժողովրդի՝ հայերի մոտ տիրապետում է ինչ-որ առանձնահատուկ բնույթի առևտրական ոգի. նրանք զբաղվում են փոխանակությամբ, ոտքով ճանապարհորդելով Չինաստանի սահմաններից մինչև Գվինեական ափի Կորսու հրվանդանը։ Դա վկայում է այդ բանական ու աշխատասեր ժողովրդի առանձնահատուկ ծագման մասին, որը հյուսիս-արևելքից հարավ-արևմուտքի ուղղությամբ կտրում անցնում է համարյա ողջ Հին աշխարհը և կարողանում է սիրալիր ընդունելություն գտնել այն բոլոր ժողովուրդների կողմից, որոնց մոտ լինում է...»[2]։

Փաստերը վկայում են, որ Թուրքիայի վրայով անցնող ավանդական առևտրական ճանապարհով, որը ձգվում էր դեպի Միջերկրական ծովի արևելյան ափերը՝ լևանտյան առևտրի խոշորագույն կենտրոնները, XV դարի վերջերից առևտուրը էին անում գերազանցապես հայ վաճառականները։ Նրանք հատկապես դաղձան Իրանի վրայով անցնող տարանցիկ ցամաքային ճանապարհի բացարձակ տերերը։ Ընդ որում հայ վաճառականներ ասելով պետք է նկատի ունենալ ոչ միայն Հայաստանի, այլև Իրանի, Սիրիայի, Եգիպտոսի և այլ հայկական գաղթավայրերի առևտրականներին։

Թուրքական զավթումները և Եվրոպան Արևելքի հետ կապող ուղու լիովին խափանումը արագացրին Հնդկաստան տանող ծովային ճանապարհի որոնումները։ XV դարի վերջի և XVI դարի սկզբի աշխարհագրական մեծ հայտնագործությունները վերջ տվեցին լևանտի առևտրական մենաշնորհին։ Ավելին, այդ առևտուրն ընկավ փակուղու մեջ, որովհետև ցամաքային ճանապարհներից տեղափոխվեց դեպի Հնդկական ու Ատլանտյան օվկիանոսները։

Իհարկե չի կարելի խոսել լևանտյան առևտրի լրիվ ընդհատման մասին։ Նրա պահպանմանը առաջին հերթին նպաստում էր Օսմանյան կայսրության աճող շահագրգռվածությունը։ Առևտրական մաքսերը գնալով ավելի մեծ դեր էին խաղում սուլթանական գանձարանի համար։ Մյուս կողմից, այդ առևտրի զոյատևման կարևոր կռվան էր հանդիսանում Հնդկաստան տանող ծովային ճանապարհի վրա պորտուգալացիների մենաշնորհը։ Թելադրելով գները, նրանց Հնդկական համեմունքները Եվրոպայում վաճառում էին 24 անգամ թանկ, քան դրանք արժեին Հնդկաստանում[3]։ Վերջապես չպետք է մոռանալ, որ բուն Լևան-

---

[1] Ф. Я. Полянский. Экономическая история зарубежных стран (эпоха феодализма). М., 1954, с. 360.

[2] Иммануил Кант. Сочинения. Т. 6, М., 1966, с. 572—573.

[3] P. Harris. An Aleppo Merchant Letter Book.—The British Museum Quarterly, 1960, v. 22, p. 67.

տի արտադրանքը Եվրոպա էր գնում միջերկրածովյան շուկաների միջոցով։ Լևանտը նաև այն հիմնական շուկան էր, որի վրայով պարսկական մետաքսը սեղափոխվում էր եվրոպական երկրներ, որոնք հանդիսանում էին մետաքսի հումքի և մետաքսյա կտորեղենի հիմնական սպառողները։ Առհասարակ հայտնի է, որ մետաքսը Արևելքի և Արևմուտքի միջև միջազգային առևտրում առաջնակարգ նշանակություն է ունեցել։ XVI դարի սկզբից Եվրոպայում մետաքսյա կտորեղենի արտադրությունը ստացավ այնպիսի բուռն զարգացում, որ տեղում արտադրվող հումքը այլևս չէր բավարարում և անհրաժեշտություն էր զգացվում այն ներմուծել Արևելքից, առավելապես Իրանից, որը դարձել էր հում մետաքսի արտադրության խոշորագույն կենտրոններից մեկը։

Սակայն հաճախակի բռնկող թուրք-իրանական պատերազմների, թուրքական քարավանային ճանապարհների վտանգավորության, եվրոպական վաճառականների համար ցամաքային քարավանային առևտրի անսովոր լինելու և այլ պատճառների հետևանքով եվրոպացիները հնարավորություն չունեին Թուրքիայի վրայով անմիջական առևտրական հարաբերություններ հաստատել Իրանի հետ և անձամբ կազմակերպել մետաքսի արտահանումը Եվրոպա։ Ճիշտ է, անգլիական կապիտալը սկսել էր նոր ուղիներ որոնել դեպի Արևելք, մասնավորապես փորձելով Լուսաստանի վրայով հասնել մետաքսի արտադրության շրջանները՝ Շիրվան և Գիլան, սակայն այդ փորձերը հաջողություն չունեցան։ Ձախողման մատնվեցին նաև 1600 թ. կազմակերպված անգլիական Օստ-Ինդկական ընկերության ջանքերը Իրանից մետաքսը ծովով արտահանելու ուղղությամբ։

Այսպիսով, ստեղծվում էր մի վիճակ, երբ Եվրոպայի համար կենսական նշանակություն ունեցող հարցի լուծման միակ ճանապարհը դարձյալ մնում էր հայ վաճառականների միջնորդ ծառայություններից օգտվելը։ Հիրավի, XVI դարի սկզբներից ցամաքային ճանապարհների վրա հում մետաքսի արտահանության բնագավառում հայերը այլևս մրցակիցներ չունեին։ Նշված շրջանում հայ վաճառականական դասի ուժեղացմանը նպաստող հանգամանքներից մեկն էլ այն էր, որ շարունակվում էր հայկական ավատականության վերջին շառավիղների նկատմամբ հալածանքների ու ֆիզիկական բնաջնջման վաղեմի քաղաքականությունը։ Նրանց հողերը անցել էին թուրքական քոչվորական ու կիսաքոչվորական ցեղերի վերնախավի ձեռքը։ Հայ աշխարհիկ ֆեոդալները որպես քաղաքական ուժ դուրս էին մղված պատմական ասպարեզից և ստիպված էին զբաղվել առևտրով[4]։

Լևանտյան քաղաքներում առևտուր էին անում ինչպես բուն Լևանտում՝ Սիս, Այաս, Ադանա, Գարաման, Հռոմկլա, Հալեպ, Կ. Պոլիս, Զմյուռնիա, Տրիպոլի և այլ քաղաքներում բնակվող հայ վաճառականները, այնպես էլ Արևելյան Հայաստանում, հատկապես Արաքսի ձախ ափին տեղավորված հայաքաղաքներ Ջուղայի, Վանանդի, Իստի, Ագուլիսի, Շորոթի, Նախիջևանի, Շահկերտի, Օրդուբադի, Ծղնայի, Դաշտի, Մեղրիի, Դաստակի, Կալերի և այլ վայրերի հայ խոջաները։ Լևանտի հետ առևտրական սեռտ կապերի մեջ էին նաև Արևմտյան Հայաստանի՝ Կարինի, Ակնի, Ամիդի, Եռզնկայի, Բաղեշի, Բաբերդի, Վանի և այլ քաղաքների անվանի վաճառականները։

Հայ առևտրական կենտրոնների մեջ հատկապես աչքի էր ընկնում Ջուղան[5], որը դարձել էր Արևելքի շուկաները Արևմուտքի հետ կապող կարևոր հանգուցակետ։ Ջուղայի վաճառականների առևտրական գործունեության սահմանները տարածվում էին Հնդկաստանից, Չինաստանից, Հեռավոր Արևելքից, Հարավ-արևելյան Ասիայից, Կենտրոնական ու Միջին Ասիայից մինչև Լևանտ, ու Արևմտյան Եվրոպայի երկրներ։ Նրանց էր պատկանում նաև Իրանի հում մետաքսի արտահանման առաջնությունը դեպի Լևանտի առևտրական կենտրոն-

---

[4] А. Д. Папазян. Аграрные отношения в Восточной Армении в XVI—XVII веках. Ереван, 1972, с. 46—47.

[5] Ջուղայի և նրա առևտրական նշանակության մասին մանրամասն տե՛ս С. В. Тер-Аветисян. Город Джуга. Тифлис, 1937.

ները։ Անգլիական այսպես կոչված «Մոսկովյան» ընկերության ծառայող Արթուր Էդվարդսը վկայում է, որ XVI դարում միայն Ջուղան Հալեպ էր արտահանում տարեկան 400—500 ջորու բեռ մետաքս և այնտեղից բերում էր 800—1000 ջորու բեռ անգլիական և վենետիկյան մահուդ[6]։ Այդ նույն ընկերության մեկ այլ ծառայող՝ Լոուրենս Չեմպենը, վկայելով, որ Սեֆյան պետությունից մետաքսը սիրիական Հալեպ և Տրիպոլի քաղաքներն էր բերվում հայերի կողմից, նշում է, որ ջուղայեցիները երբեմն այդ քաղաքներն էին բերում մինչև 1000 ջորու բեռ մետաքս[7]։ Նման վկայություններ մենք գտնում ենք նաև XVII դարի անգլիացի ուղեգիր Ջոն Քարտրայտի մոտ[8]։

Հայերի մասնակցությունը լևանտյան առևտրին առանձնակի թափ ստացավ XVII դարի սկզբներին։ Դա բացատրվում է առաջին հերթին նրանով, որ եվրոպական շուկաներում մետաքսի պահանջարկը շեշտակիորեն աճել էր։ Ստամբուլում Նիդերլանդների դեսպանը 1615 թ. մայիսի 2-ին իրենց արտաքին գործերի մինիստրին հաղորդում էր, որ դեպի Հնդկաստան տանող ծովային ճանապարհի բացումից հետո Արևելքի հետ համեմունքների առևտուրն անցավ երկրորդ պլան և ընդհակառակն, Արևելքի և Արևմուտքի միջև առևտրի հիմնական ապրանք դարձավ հում մետաքսը[9]։ Գերմանացի Ադամ Օլեարիուսի վկայությամբ XVII դարի առաջին կեսին Իրանում հավաքվում էր շուրջ 20 հազար հակ հում մետաքս, որից երկրի ներսում օգտագործվում էր միայն հազար հակ[10], իսկ մնացածը արտահանվում էր առևտրի լևանտյան կենտրոններ և Եվրոպա։

Այսպիսով, XVII դարում ևս Իրանը շարունակում էր մնալ մետաքսի արտադրության համաշխարհային նշանակություն ունեցող կենտրոններից մեկը։

Սեֆյան շահ Աբբաս I-ը ծրագրեր էր մշակում մետաքսի արտահանության ծավալման միջոցով պետության գանձարանը հարստացնելու ուղղությամբ։ Այդ նպատակով 1592 թ. նա մետաքսաբեր Գիլանի նահանգը միացրեց թագին։ Այնուհետև նա սահմանեց հում մետաքսի վաճառահանման պետական մենաշնորհ։ Վերոհիշյալ ծրագրի բաղկացուցիչ մասն էր կազմում նաև 1605 թ. շահ Աբբաս I-ի կողմից կազմակերպված ջուղայեցիների բռնագաղթը դեպի Իրան։ Այդ միջոցառման հետևանքով մետաքսի առևտրի միջազգային կենտրոնը տեղափոխվեց շահի մայրաքաղաքի՝ Սպահանի մոտ կառուցված Նոր Ջուղա քաղաքը, որը Լեոյի արտահայտությամբ շուտով վերածվեց գաղութային հայ կապիտալի ամենամեծ ու ամենաուժեղ կենտրոնի՝ գրեթե մի ամբողջ դարի ընթացքում[11]։

Հայտնի է, որ շահ Աբբաս I-ը վարում էր երկրի ապաթուրքականացման քաղաքականություն՝ նպատակ ունենալով թուլացնել երկրում սիրապետող պիրքեր ունեցող թուրքական ռազմական ազնվականությանը։ Եվ թեպետ իր այդ նպատակին հասնելու համար նա հենվում էր պետության իրանական տարրի վրա, հիմք դնելով այսպես կոչված «իրանիզմի» քաղաքականությանը[12], սակայն աշխատում էր իր համար հենարան ստեղծել նաև հանձինս հայ տարրի[13]։

---

[6] Richard Hakluyt. The principal Navigations, voyages, traffiques and discoveries of the English Nation. Vol. II, London, 1913, p. 45.

[7] Նույն տեղում, էջ 117։

[8] John Cartwright. Voyage from Aleppo in Hispahan and back again.— Hakluytus Posthumus or Purchase his Pilgrimes, Vol. VIII, Glasgow, 1905, p. 501.

[9] Տե՛ս Արտավազդ արք. Սյուրմելյան. Պատմություն Հալեպի հայոց. հ. 3, Փարիզ, 1950, էջ 293—302։

[10] Подробное описание путешествия Голштинского посольства в Московию и Персию в 1633, 1636 и 1639 гг., составленное секретарем посольства Адамом Олеарием. М., 1870, с. 791.

[11] Լեո. Խոջայական կապիտալ. հ. 1, Երևան, 1934, էջ 66։

[12] H. F. Farmayan. The beginnings of modernization in Iran. The Policies and Reforms of Shah Abbas I (1587—1629). Salt Lake City, Utah, 1969, p. 14.

[13] Նույն տեղում, էջ 16։

նոր Ջուլֆայի խոջաները կազմում էին Իրանի վաճառական դասի ընտրանին, որն օժտված էր բազմապիսի իրավունքներով և նույնիսկ իր ազգային ու կրոնական առանձնահատկությունները պահպանելու և զարգացնելու առանձնաշնորհումներով՝ մի հանգամանք, որն ըստ էության անօրինակ երևույթ էր մահմեդական մի երկրի համար[14]։

Մետաքսի և իրանական այլ ապրանքների արտահանումն ու վաճառքն ապահովելու համար շահը ամեն կերպ խոսախուսում էր հայ վաճառականների ջանքերը՝ հայտնաբերելու նոր, աղաս։ շուկաներ[15]։ Մյուս կողմից, նա դաժան միջոցառումներով ստիպում էր գյուղացիներին զբաղվել մետաքսի արտադրությամբ։ Այդ նպատակով հայերի մեծ բռնագաղթի ժամանակ նա Մազանդարան նահանգ գաղթեցրեց 40 հազար հայ գյուղացիների, 12 հազար վրացիների և 7 հազար հրեաների[16]։

Ջուղայեցի խոջաները անմիջապես վերականգնում են Լևանտում իրենց ունեցած հնամենի առևտրական կապերը։ Միաժամանակ, ընդառաջելով շահ Աբբաս I-ի ձգտումներին՝ Իրանի արտաքին առևտրի ուղին Թուրքիայի ցամաքային ճանապարհներից դեպի հարավ՝ Պարսից ծոց տեղափոխելու ուղղությամբ, հայ վաճառականները եռանդուն փորձեր են կատարում իրացնելու ծովային այդ ճանապարհը[17]։ Սակայն այստեղ նրանք հանդիպում են պորտուգալացիների կատաղի դիմադրությանը, որոնք իրենց հսկողությունն էին սահմանել ծոցի և առհասարակ ողջ Հնդկական օվկիանոսի նկատմամբ[18]։ Թեև հետագայում ևս, շահի կողմից եռանդուն փորձեր կատարվեցին հասնելու իր նվիրական իղձին և այդպիսով տնտեսական հարված հասցնելու իր ոխերիմ թշնամուն՝ Օսմանյան կայսրությանը, սակայն այդ բոլոր փորձերն ավարտվեցին կատարյալ անհաջողությամբ։ Առաջվա նման թուրքական ցամաքային ճանապարհները մնացին որպես մետաքսի արտահանման հիմնական ուղիներ[19]։ Սակայն Լևանտում ևս հայ վաճառականները հանդիպելու էին լուրջ առևտրական մրցակիցների ու ոխյանների, որոնց մեջ ամենավտանգավորը, անշուշտ, Անգլիան էր։ Ելնելով Ֆրանսիայի և Հոլանդիայի հետ իր քաղաքական ու առևտրական հակամարտությունից, նա ամեն կերպ աշխատում էր կամ իրանական մետաքսի արտահանման մենաշնորհը վերցնել իր ձեռքը և կամ, ծայրահեղ դեպքում, Լևանտում խափանել մետաքսի առևտուրը։ Անտարակույս, այս քաղաքականությունն իր սուր ծայրով ուղղված էր նաև հայ վաճառականության դեմ, մանավանդ որ նրա առևտրական գործառնությունների մեծագույն մասը կատարվում էր հենց Ֆրանսիայի ու Հոլանդիայի հետ։ Առհասարակ պետք է նշել, որ հանձինս հայ առևտրական դասի բրիտանական առևտրական կապիտալը իր համար տեսնում էր լուրջ մրցակցի։

Իր ախոյաններին թուլացնելու համար Մեծ Բրիտանիան կազմակերպում է բազմաճակատ մի գրոհ։ Նախ 1592 թ. անգլիացի վաճառականները ստեղծեցին «Լևանտյան ընկերությունը», որը երբեմն կոչում էին նաև «Թուրքական ընկերություն»։ Ձգտելով էժան գներով հում մետաքս ձեռք բերել և նրա արտա-

[14] R. W. Ferrier. The Armenians and the East India Company in Persia in the Seventeenth and Early Eighteenth Century.—Economic History Rewiew, 2nd series, XXVI, 1973, p. 40.

[15] Niels Steensgaard. The Asian Trade Revolution of the Seventeenth Century. Chicago, 1973, p. 377.

[16] A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII and XVIII centuries. Vol. I, London, 1939, p. 99—108.

[17] ابوالقاسم سحاب تاریخ زندگانی شاه عباس کبیر بخش اول تهران ۱۳۲۵ ص ۳۱۰

[18] Charle de Lannoy et Van der Linden. Histoire de l'expansion coloniale des peuples Europeens. T. II, Bruxelles, 1907, p. 64.

[19] Տե՛ս Վ. Ա. Բայբուրտյան. Армянская колония Новой Джульфы в XVII в. (Роль Новой Джульфы в ирано-европейских политических и экономических связях). Ереван, 1969, с. 26—41.

հանման մենաշնորհը վերցնել իրենց ձեռքը, «լևանտյան ընկերության» վաճառականները հետևողականորեն փորձեր էին կատարում թափանցել Իրանում մետաքսի արտադրության հիմնական շրջանները։ 1607 թ. նրանք թուրքական սուլթանից իրավունք ստացան մուտք գործել Սև ծով, որը փակ էր եվրոպացիների առջև։ Այնուհետև, 1609 թ. Կ. Պոլսում անգլիական դեսպանը թույլտվություն ձեռք բերեց, որպեսզի «Ռոյալ Դիֆենս» նավը անցնի Բոսֆորով և Տրապիզոնում կազմակերպվի առևտրական գրասենյակ, որի միջոցով ենթադրվում էր Իրանից հում մետաքս արտահանել[20]։

Թուրքասիրությունը ընտրելով որպես իր նպատակներին հասնելու ազդու միջոց, «Լևանտյան ընկերությունը» նույնիսկ սկսեց եռանդուն ճնշում գործադրել սեփական կառավարության վրա, որպեսզի նա հակաթուրքական դաշինքի վերաբերյալ պայմանագիր չկնքի շահ Աբբաս I-ի ներկայացուցիչ Էնտոնի Շիրլիի հետ, որն այդ նպատակով 1599 թ. շահի կողմից ուղարկված էր Եվրոպա[21]։ Այդ ճնշման հետևանքով Շիրլիի առաքելությունն ավարտվեց կատարյալ ձախողմամբ։ Բանը հասավ նույնիսկ նրան, որ «Լևանտյան ընկերության» վաճառականների պահանջով բրիտանական պետական քարտուղար Սոլսբերին 1606—1607 թթ. բողոք ներկայացրեց Տոսկանայի դքսին, պահանջելով դադարեցնել անգլիական նավերի օգտագործումը թուրքերի դեմ[22]։ Իսկ Էնտոնի Շիրլիի եղբայրը, Թոմաս Շիրլին, որը Եվրոպայում մեծ հռչակ էր ձեռք բերել իր «Դատողություններ թուրքերի մասին» հակաթուրքական պամֆլետի շնորհիվ, նետվեց Թաուերի բանտը՝ «բարեկամ Թուրքիայի դեմ քարոզչության» մեղադրանքով։

Ի դեպ, անգլիացիներին հայտնի էր, որ շահ Աբբաս I-ի հանձնարարությամբ նրա հայ դիվանագիտական հանձնակատարները Եվրոպայում բանակցություններ են վարում իրանա-եվրոպական հակաթուրքական դաշինք կնքելու վերաբերյալ[23]։ Այդ հանգամանքը ևս անկասկած նրանց կողմից օգտագործվում էր թուրքական իշխանությունների մոտ հայ վաճառականներին վարկաբեկելու համար։

Չնայած սուլթանից ստացած կապիտուլյացիոն արտոնություններին[24], Լևանտում անգլիացիները աստիճանաբար զիջում էին դիրքերը, ասպարեզը թողնելով իրենց մրցակիցներին՝ հոլանդացիներին ու ֆրանսիացիներին, իսկ հում մետաքսի գծով՝ նաև հայերին։ Դրա պատճառներից մեկն էլ այն էր, որ նորաստեղծ Օստ-Հնդկական ընկերությունը Լևանտյան վաճառականներին դուրս էր մղում արևելյան պերճանքի առարկաների ու համեմունքների առևտրից։ Ժամանակակիցների վկայությամբ, Օստ-Հնդկական ընկերության ստացած շահույթի չափը եռեք անգամ գերադանցում էր Լևանտյան ընկերության շահույթի չափին[25]։ Այդ պատճառով 1604 թ. Լևանտյան ընկերության թվով 64 վաճառականներ տեղափոխվեցին ավելի շահութաբեր Օստ-Հնդկական ընկերությունը[26]։

---

[20] K. Knorr. British Colonial Theories 1570—1850. Toronto, 1944, p. 29.

[21] Edvard Denison Ross. Sir Anthony Sherley and his Persian Adventure. London, 1933.

[22] Calendar of State Papers, Colonial ser., 1601—1617. London, 1860—193), № 590, 1622—1624, № 283, 404.

[23] *Տե՛ս Վ. Բայբուրդյան. Իրանահայերի մասնակցությունը իրանա-եվրոպական հակաթուրքական դաշինք ստեղծելու փորձերում (16—17-րդ դդ.).—ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1984, № 9։*

[24] *Անգլիան Թուրքիայում իր առաջին կապիտուլյացիաները ստացել է 1593 թ. (տե՛ս* G. Noradounghian. Recueil d'actes internationaux de l'Empire Ottoman. T. I, Paris, *1897, p. 37). 1675 թ. կնքվեց այսպես կոչված «վերջնական» կապիտուլյացիոն պայմանագիրը, որը պահպանվեց մինչև 1924 թ.։*

[25] Early English Tracts on Commerce. Cambridge, 1954, p. 129, 156.

[26] W. Scott. The Constitution and Finance of English, Scottish and Irish Joint-stock Companies to 1720. Vol. 2, Cambridge, 1912, p. 91.

Լևանտյան ընկերության մրցողունակության բարձրացմանը չօգնեց նույնիսկ այն, որ 1617 թ. անգլիական այսպես կոչված «Արկածախնդիր վաճառականների» ընկերությունը հրաժարվեց Եվրոպայից Լևանտ ապրանքներ ներմուծելու իր իրավունքից հօգուտ «Լևանտյան ընկերության»[27]։

Անգլիացիների համար բնականաբար բնավ ձեռնտու չէր հում մետաքսը ձեռք բերել երկրորդ ձեռքերից՝ հայ վաճառականներից։ Մատնանշելով այդ իրողությունը, Օստ-Հնդկական ընկերության ծառայող Ռիչարդ Ստիլը գրում էր, որ Հալեպում, օրինակ, հում մետաքսը 50 տոկոսով ավելի թանկ էր, քան բուն Իրանում[28]։ Այդ պատճառով անգլիացիները եռանդուն կերպով աշխատում էին ներթափանցել իրանական շուկա։ 1615 թ. Օստ-Հնդկական ընկերությունը շահ Աբբաս I-ից ստացավ Իրանում աղատ առևտուր անելու առաջին հրամանագիրը[29], իսկ 1617 թ. կնքվեց անգլո-իրանական առևտրական պայմանագիր, ըստ որի Իրանի ողջ մետաքսի գնման ու արտահանման մենաշնորհը անցնում էր Օստ-Հնդկական ընկերությանը[30]։ Այս պայմանագիրը ուղղակի հարվածում էր Նոր Ջուղայի հայ վաճառականների շահերին[31]։ Այդ պատճառով վերջիններս նետվում են վճռական պայքարի, որպես զենք օգտագործելով հում մետաքսի գների կտրուկ բարձրացումը[32]։ Ի վերջո խոջաները հասնում են նրան, որ շահ Աբբաս I-ը չեղյալ է հայտարարում անգլիացիների հետ կնքած պայմանագիրը և հայերին է հանձնում իրանական մետաքսի արտահանման մենաշնորհային իրավունքը[33], նրանց շնորհելով նաև շահական ապրանքներով առևտուր անող «թաշիրե-ե խասս-ե շերիֆե» առանձնաշնորհյալ վաճառականների իրավունք։

Շահ Աբբաս I-ի առևտրական քաղաքականության այս կտրուկ շրջադարձը մասամբ պայմանավորված էր նրանով, որ Օստ-Հնդկական ընկերության հետ կնքված պայմանագրի գործողության առաջին իսկ օրերից շահական կառավարության և անգլիացիների միջև սկսվեցին տարաձայնություններ. շահը պահանջում էր հում մետաքսի համար բոլոր վճարումները կատարել միայն դրամով, մինչդեռ անգլիացիները դեմ էին դրան և առաջարկում էին վճարումները կատարել զանազան ապրանքներով[34]։

Ենթադրություններ կան, որ հայ վաճառականներին այդ հարցում օգնեցին նաև թուրքերի դեմ շահ Աբբաս I-ի տարած հաղթանակներում փառաբանված, ծագումով հայ զորավարներ, բանակի գլխավոր հրամանատար Ալլահվերդի խանը և Կարճկա խանը[35]։ Սակայն մեր կարծիքով կարևորը այն էր, որ անգլիացիները չարդարացրին շահի հույսերը մետաքսի արտահանումը Պարսից ծոցի ճանապարհով կազմակերպելու ուղղությամբ։ Բացի այդ, Նոր Ջուղայի վաճառականների կողմից շահական գանձարանին բերվող եկամուտները գերազանցում էին այն գումարները, որ խոստանում էին անգլիացիները[36]։ Բացի այդ, շահը չէր կարող իր հսկողության տակ պահել անգլիացիներին, մինչդեռ

---

27 M. Epstein. The English Levant Company. London, 1908, p. 112.

28 احمد تاج بخش، ایران در زمان صفویه، تبریز، ۱۹۷۱، ص ۱۹۶

29 Roger Savori. Iran under the Safavids. Cambridge, 1980, p. 113.

30 مقتدم غلام حسین، کلید خلیج فارس، تهران، ۱۳۳۳، ص ۲۵

31 K. Bayani. Les relations de l'Iran avec l'Europe occidentale a l'epoque Safavide. Paris, 1937, p. 116–118.

32 نصرالله فلسفی، تاریخ روابط ایران و اروپا در دوره صفویه، قسمت اول، تهران، ۱۹۳۷، ص ۱۴۵.

33 نصرالله فلسفی، زندگانی شاه عباس اول، ۳، تهران، ۱۹۶۲، ص ۲۲

34 Հ. Քյուրդյան. Նյութեր հայ վաճառականության պատմության (հում մետաքսի առևտուրը և հայերը), առանձնատիպ, էջ 11։

35 H. F. Farmayan. Op. cit., p. 21–22.

36 Հ. Քյուրդյան. Նշվ. աշխ., էջ 19։

հայ վաճառականները հանդիսանում էին իր հպատակները։ Եվ, վերջապես, ինչպես նշվել է վերևում, ի դեմս ջուղայեցի վաճառականների, շահ Աբբաս I-ը ցանկանում էր ստեղծել քաղաքացիական բյուրոկրատիայի համար մի հենարան, խոշոր մեծաքանակ առևտրով զբաղվող վաճառականների մի դաս, որը սերտորեն կապված լիներ արտաքին շուկայի հետ և որին ցանկացած ժամանակ կարելի լիներ օգտագործել միջնորդի դերում եվրոպական երկրների հետ Իրանի քաղաքական և տնտեսական հարաբերությունները զարգացնելու համար։ Թերևս այդ է պատճառը, որ ինչպես շահ Աբբաս I-ը, այնպես էլ նրա ժառանգորդները «գերադասում էին Եվրոպայում հում մետաքսը վաճառել անմիջականորեն հայ վաճառականների միջոցով»[37]։

Այսպիսով, անգլիացիների առաջին փորձերը՝ հիմնավորվելու Իրանական շուկայում, ավարտվեցին անհաջողությամբ։ Պաշտպանելով իրենց առևտրական շահերը, հայ վաճառականները օբյեկտիվորեն հանդես էին գալիս օտարերկրյա կապիտալի Իրան ներխուժման դեմ։

Անգլիական առևտրական կապիտալի և հայ խոջայության միջև ախոյանությունը չսահմանափակվեց լոկ XVII դարի առաջին քառորդով։ Ողջ հարյուրամյակի ընթացքում անգլիացիները փորձում էին հայ վաճառականների ձեռքից խլել մետաքսի արտահանման նրանց մենաշնորհը և հատկապես սահմանափակել այդ ապրանքի արտահանումը դեպի Լևանտ։ Սակայն բրիտանական այդ քաղաքականությունը ճեղքվածք տվեց և չիրականացավ գլխավորապես այն պատճառով, որ չնայած գործադրված բազում ջանքերին, Օստհնդկական ընկերությանը այդպես էլ չհաջողվեց կազմակերպել իրանական մետաքսի զանգվածային արտահանության գործը Պարսից ծոցի ճանապարհով։ Նախկինի պես, այդ ապրանքի մեծագույն մասը արտահանվում էր հայ վաճառականների կողմից, առավելապես թուրքական քարավանային ճանապարհով դեպի Լևանտի առևտրական կենտրոնները[38]։ Ընդ որում հայ վաճառականների լևանտյան առևտրի վրա բարերար ազդեցություն ունեցավ ինչպես 1616 թ. Սարավում կնքված թուրք-իրանական պայմանագիրը, որի մեջ հատուկ հոդված էր պարունակվում այն մասին, որ իրանական վաճառականները իրավունք են ստանում Թուրքիայի վրայով ազատորեն արտահանել հում մետաքս և այլ ապրանքներ[39], այնպես էլ Զոհաբում կնքված 1639 թ. թուրք-իրանական հաշտության պայմանագիրը, որը երկու պետությունների միջև ավելի քան 80-ամյա խաղաղ զարգացման մի շրջան բերեց։ Հայ վաճառականների կեղեքումները, նրանց ապրանքների բռնագրավումները կամ անօրինակ մաքսերի սահմանումը որոշ չափով նվազեց։ Նահագրգռված լինելով, որ ողջ իրանական առևտուրը կատարվի Թուրքիայի վրայով, սուլթանական կառավարությունը միջոցներ էր ձեռնարկում ապահովելու համար առևտրական քարավանների դյուրին տեղաշարժերը Օսմանյան կայսրության տարածքով։ Այսպիսով, 1639 թ. հետո լևանտյան առևտրում իրանահայ վաճառականների մասնակցությունը ձեռք բերեց նոր թափ։ Հալեպում, Ալեքսանդրեթում, Զմյուռնիայում, Տրիպոլիում, Ստամբուլում և այլ քաղաքներում հայ վաճառականները ծավալում են մինչ այդ աննախընթաց չափերի հասնող առևտուր։ Ստամբուլում անգլիական առևտրական ներկայացուցիչը ստիպված էր խոստովանել, որ այդ քաղաքում, որտեղ անգլիացիների առևտրական հիմքերը առավել կայուն էին, հում մետաքսի առևտուրը գտնվում է առավելապես հայ վաճառականների ձեռքում։ Այս քաղաքի մասին Գրիգոր Դարանաղցի պատմիչը նշում է, որ «ամենայն վաճառականք հայերք շատ կան անդ յամենայն աշխարհաց»[40]։

Լևանտի առևտրական կենտրոններում բազմամարդ հայկական զաղութ-

---

37 Новая история стран зарубежного Востока. Т. 1, М., 1952, с. 86.

38 Տե՛ս Poullet. Nouvelles relations du Levant. Paris, 1668, p. 413–416. Sanson. Voyage ou Relation de l'etat présent de royaume de Perse. Paris, 1694, p. 157.

39 Տե՛ս Figueroa, don Garcia. Ambassade en Perse. Paris, 1667, p. 189.

40 Գրիգոր Դարանաղցի. Ժամանակագրութիւն. Երուսաղեմ, 1915, էջ 168—169։

ների և դաղթօջախների առկայությունը նշանակալիորեն հեշտացնում էր հայ վաճառականների գործունեությունը և բարձրացնում նրանց մրցողունակությունը։ Օրինակ, Հալեպում, որը շնորհիվ իր աշխարհագրական դիրքի, ընդհուպ մինչև նոր ժամանակները հանդիսանում էր աշխարհի առևտրական մեծագույն կենտրոններից մեկը, արդեն XV դարում գոյություն ուներ բազմամարդ հայ գաղութ իր եկեղեցիներով, սրբատեղիներով, հյուրանոցներով և այլն։ Եվրոպացի ճանապարհորդների վկայությամբ, XVI դարում այստեղ ի թիվս տարբ, մավրիտանացի և այլ ազգությունների վաճառականների, գործում էին մեծ թվով հայ վաճառականներ[41]։ Հատկապես ջուղայեցիները այս վաճառաշահ քաղաքում այն աստիճանի ստվար զանգված էին կազմել, որ եվրոպացի Ուիլյամ Միդդուլֆը, որը 1600 թ. այցելել էր Հալեպ, առանձնացնում է նրանց մնացած հայ բնակիչներից. «Հալեպը,— գրում է նա,— բնակեցված է թուրքերով, արաբներով, հրեաներով, հույներով, հայերով, ջուղայեցիներով, նեստորականներով և տարբեր այլ ազգերով»[42]։ Այստեղ 1590 թ. մինչև 1630 թ. ֆրանսիացիները, հոլանդացիները և իսպանացիները մետաքսի առևտուրը կատարել են բացառապես հայերի հետ[43]։

Հալեպում հատկապես հայտնի են եղել խոջաներ Պետիկենց և Սանոսենց առևտրական ընտանիքները, որոնք միջնորդի դեր էին խաղում Արևելքի և Արևմուտքի վաճառականների միջև։ Խոջա Պետիկը ոչ միայն Հալեպի, այլև ողջ Սիրիայի մաքսապետն էր (էմին)։ Նրանից կախում ունեին նաև Տրիպոլիի և Ալեքսանդրեթի մաքսատները։ Նա միաժամանակ հանդիսանում էր Հալեպում Հոլանդիայի առևտրական ներկայացուցիչը[44]։ Նկատի ունենալով խոջա Պետիկի հարստությունն ու ազդեցությունը, Սիմոն Լեհացին նրա մասին գրում է, որ նա «որպես փաշա մի շրջեր»։

Սակայն թուրքական իրականության պայմաններում, երբ իսպառ բացակայում էր վաճառականի անձի և գույքի ապահովությունը, երբ բռնություններն ու կեղեքումները սովորական երևույթ էին, խոջա Պետիկը դառնում է բանսարկության ու ընչաքաղցության զոհ։ XVII դարի 30-ական թթ. նա գլխատվում է Հալեպի բանտում[45]։ Տեղին է նշել, որ հայ վաճառականների կարողությունը շատ հաճախ կոզոպտության ճարակ էր դառնում նաև տեղական կառավարիչների միջև մղվող անընդհատ միջավատական պատերազմների ժամանակ։ Հայ վաճառականները հատկապես մեծ վնաս կրեցին, երբ 1604—1605 թթ. Դամասկոսի փաշան շրջապատեց ու կողոպտեց Հալեպը[46]։

XVII դարի ֆրանսիացի ճանապարհորդ Տավերնիեն գրում է, որ «ողջ Թուրքիան լի է ավազակներով, որոնք թափառում են խոշոր խմբերով և ճանապարհներին դարանակալում են վաճառականներին։ Եթե նրանց հանդիպում են հարուստ վաճառականներ, կողոպտում են նրանց և հաճախ զրկում են նաև կյանքից»[47]։

Սովորաբար մետաքսով բեռնավորված հայ վաճառականների քարավանները Հալեպ էին ժամանում Էրզրումի վրայով, իսկ ավելի հաճախ՝ Թավրիզ—Վան—Բաղեշ—Դիարբեքիր—Բիրեջիք ճանապարհով։ Ընդ որում հայ վաճառականները հանդիսանում էին նաև կապող օղակ Պարսից ծոցից դեպի Հընդկական օվկիանոս տանող առևտրական կենտրոնների ու լևանտյան առևտրի կենտրոնների միջև։

---

41 Hakluytus Posthumus or Purchas his Pilgrimes. Vol. X, Glasgow, 1906, p. 88—89.

42 Նույն տեղում, էջ 262։

43 Արտավազդ արք. Սյուրմելյան. Պատմություն Հալեպի հայոց. հ. 3, Փարիզ, 1950, էջ 287։

44 Նույն տեղում, էջ 288։

45 Նույն տեղում։

46 The Travels of Pedro Teixeira. London, 1902, p. 117.

47 Les six voyages de Jean Baptiste Tavernier en Turquie, en Perse et aux Indes. Paris, 1692, p. 78.

Անշուշտ, հայ վաճառականների առևտուրը Լևանտի հետ չէր սահմանափակվում լոկ հում մետաքսով և մետաքսե կտորեղենով։ Նրանք Լևանտի առևտրական կենտրոններն էին հասցնում արևելյան ամենաբազմապիսի ապրանքներ (օրինակ՝ համեմունքներ, թանկագին քարեր, կաշվեղեն, այծի և ուղտի բուրգ, բուսական ներկեր, գորգեր, սուրճ, մորթիներ և այլն), իսկ Լևանտից Արևելք էին տեղափոխում մահուդ, վենետիկյան կրսեներ ու կերպասներ, հայելիներ, ապակեղեն, ակնոց, բուստ, սաթ, ժամացույցներ, հոլանդական և անգլիական ասուիներ, ոսկեթել ու աղծաթթել դիպակներ, թավշե կտորեղեն, հրացաններ, պերճանքի զանազան առարկաներ, շաքար, թուղթ, ասեղներ, դրամ և բազմապիսի այլ ապրանքներ[48]։ Լևանտում հայ վաճառականների կողմից բերված ապրանքների հիմնական գնորդներն էին Ֆրանսիան, Հոլանդիան և իտալական քաղաքներն ու քաղաք-հանրապետությունները (Վենետիկ, Ջենովա, Լիվորնո, Լուկկա, Ֆերրարա, Պյաչենցա և այլն)։

Դեռևս XVI դարի վերջերից կապիտուլյացիաների հաստատումով Լևանտը կովադաշտ էր դարձել գլխավոր արևմտյան տերությունների՝ Ֆրանսիայի, Անգլիայի և Հոլանդիայի միջև։ XVII դարի սկզբից սկսած նրանց միջև բորբոքվեց անհաշտ առևտրական պատերազմ, որը ծայրահեղ սրության հասավ հատկապես դարի երկրորդ կեսին[49]։

Այս պայմաններում հայ վաճառականությունը ստիպված էր մեծ ճկունություն դրսևորել լևանտյան առևտրում իր դիրքերը պահպանելու համար։ Այստեղ հայ առևտրական կապիտալը հատկապես սերտ կապերի մեջ էր Վենետիկի Հանրապետության հետ[50]։ Դա բացատրվում է նրանով, որ ի վիճակի չլինելով դիմանալու առաջավոր արդյունաբերական երկրների հետ առևտրական մրցակցությանը, Վենետիկը ստիպված էր ամեն կերպ խրախուսել արևելյան, այդ թվում նաև հայ վաճառականների միջնորդ առևտուրն իր հետ, այդ նպատակով նրանց տրամադրելով բազմաթիվ արտոնություններ ու իրավունքներ և պարբերաբար իջեցնելով նրանցից գանձվող մաքսատուրքերը[51]։

Հայ վաճառականների հետ ապրանքափոխանակության ընդլայնումը Վենետիկի համար կենսականորեն կարևոր հարց դարձավ հատկապես XVII դարի II կեսին, երբ ֆրանսիական դիվանագիտության դոդումով Թուրքիան ոչ միայն խզեց իր հարաբերությունները Վենետիկի հետ, այլև զրկեց նրան առևտրի բնագավառում ունեցած արտոնություններից[52]։

Լևանտում հայ վաճառականները խոշոր առևտուր ունեին նաև Հոլանդիայի հետ, որը XVII դարի կեսերին հասել էր իր առևտրական հզորության գագաթնակետին[53]։ Այդ ժամանակ Նիդերլանդները դարձել էին դեպի լևանտյան շուկաներ կենտրոնական և հյուսիսային Եվրոպայի ապրանքների հիմնական մատակարարողները[54]։ Հոլանդիան մրցակիցների դեմ թեժ պայքարում աստիճանաբար ընդարձակում էր իր առևտուրը Լևանտում։ Մինչև Իրանի հետ հոլանդացիների կողմից անմիջական առևտրական կապերի հաստատումը (1623 թ.)

---

[48] Այդ մասին մանրամասն տե՛ս G. Berchet. La Republica di Venezia e la Persia. Torino, 1865. Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողով»-ը (Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. N 8413)։

[49] M. Herbette. Une ambassade persane sous Louis XIV, d'après des documents inédits. Paris, 1907, p. 234–235.

[50] Э. Шахмалиев. Об англо-испанских противоречиях на Переднем Востоке в 80—90 гг. XVI и первой четверти XVII в.—Ученые записки Азербайджанского Госуд. университета, гуманитарная серия, 1958, № 1, с. 124.

[51] G. Berchet. Op. cit. p. 67.

[52] Н. А. Смирнов. Россия и Турция в XVI—XVII вв. Т. 1.—Ученые записки, вып. 94, М., 1946, с. 64.

[53] Կ. Մարքս. Կապիտալ. հ. 1, Երևան, 1954, էջ 784, 824։

[54] H. Castries. Les sources inédites de l'histoire du Maroc. T. 3, Paris, 1912, p. 40.

իրանա-հոլանդական առևտուրը տեղի էր ունենում գլխավորապես հայ վաճառականների միջոցով, ընդ որում՝ ինչպես լևանտյան քաղաքներում, այնպես էլ անմիջականորեն Հոլանդիայում։ Ամստերդամը ծանոթ էր հայերին դեռ XVI դարի 60-ական թթ.[55]։ Ընդամենը մեկ հարյուրամյակ անց, 1660-ական թթ. միայն Ամստերդամում արդեն հաշվվում էին 60 հայկական առևտրական տներ[56]։

Լևանտում Իրանի և Թուրքիայի հայ վաճառականների հետ հոլանդացիները լայն շփումների մեջ էին գտնվում հատկապես Զմյուռնիա, Կ. Պոլիս և Հալեպ քաղաքներում։ Լևանտում դեռևս թույլ դիրքեր ունենալով, հոլանդացիները ևս հակված էին համագործակցել տեղական վաճառականների հետ իրենց մրցակիցների՝ անգլիացիների ու ֆրանսիացիների դեմ հաջող պայքար մղելու համար։

1612 թ. Նիդերլանդները կարողացան Բ. Դռնից ստանալ առաջին կապիտուլյացիան, որը նրանց անգլիացիների ու ֆրանսիացիների հետ հավասար իրավունքներ էր տրամադրում։ Նրանք աշխույժ նավագնացություն հաստատեցին իրենց նավահանգիստների ու օսմանյան Թուրքիայի առևտրական կենտրոնների միջև, որտեղ իրացնում էին իրենց արդյունաբերական ապրանքները և գնում էին մեծ քանակությամբ արևելյան ապրանքներ, առավելապես հում մետաքս և բուրդ[57]։ Հենց այս շրջանում հոլանդացիները իրենց առևտրական գործառնությունների մեջ լայնորեն ընդգրկեցին նաև Լևանտի հայ և հույն վաճառականներին[58]։ 1623 թ., երբ հոլանդական Օստ-Հնդկական ընկերությունը շահ Աբբաս I-ից Իրանում աղատ առևտուր կատարելու վերաբերյալ հրամանագիր ստացավ, հայ-հոլանդական առևտրական կապիտալի համագործակցությունը ձեռք բերեց ավելի լայն չափեր[59]։

Լևանտյան նավահանգիստներում հայ վաճառականների հետ հոլանդացիների առևտուրը մեծ աշխուժություն է ապրում հատկապես XVII դարի 30-ական թթ.։ Դրա հիմնական պատճառը այն էր, որ 1634 թ. Հոլշտինյան ընկերությունը հրաժարվում է Ռուսաստանի վրայով իրանական մետաքսը ներմուծել Եվրոպա՝ ռուսական իշխանությունների առաջադրած բարձր մաքսատուրքերի պատճառով[60]։

XVII դարի երկրորդ կեսին լևանտյան վաճառականների ընդլայնվող առևտուրը հոլանդացիների կողմից սկսում է դիտվել որպես առևտրական մրցակցություն և ըստ այդմ սկսում են կիրառել դանազան պատժամիջոցներ։ Այսպես, Զմյուռնիայում հաստատված հոլանդական հյուպատոս Միխիել Մորտիերը փորձում է սահմանափակել մրցակից հայ և հույն վաճառականների առևտուրը Եվրոպայի հետ։ Ուստի վերջիններս սկսում են բողոքագիր հղել հոլանդական կառավարությանը։ 1658 թ. հայ վաճառականները մի բողոքագիր են ներկայացնում Նիդերլանդների կառավարությանը, որտեղ գանգատվում էին, որ հոլանդական հյուպատոսը արհեստականորեն դժվարություններ է ստեղծում՝ արգելակելու և խափանելու համար իրենց առևտուրը։ Ընդ որում ասվում էր, որ հյուպատոսը իրենց հետ վաճառականի պես չի վարվում, այլ «Թուրքի» պես և ինդրում էին փոխարինել նրան մեկ ուրիշով[61]։ Գործին միջամտում է Զմյուռ-

---

55 Ա. Սարուխան. Հոլանդիան և հայերը ԺԶ—ԺԹ դարերում. Վիեննա, 1926, էջ 14։

56 Fr. Macler. Quatre Conférences sur l'Arménie et les Armeniens Faites en Hollande. Paris, 1932, p. 251.

57 H. Watjen. Die Niederländer im Mittelmeergebiet zur Zeit ihrer höchsten Machtstellung Abhande Z. Verkehrs und Seegeschichte. Bd. II, Berlin, 1909, S. 134, 146.

58 Նույն տեղում։

59 H. Dunlop. Source pour servir a l'histoire de la compagnie des Indes Orientales et la Hay. 1930, p. 74.

60 Н. Г. Куканова. Очерки по истории русско-иранских торговых отношений в XVII—первой половине XIX в. Саранск, 1977, с. 71.

61 Ա. Սարուխան. նշվ. աշխ., էջ 15—31։

նիայի հոլանդական գաղութը, որը 1658 թ. փետրվարի 14-ին մի ընդարձակ տեղեկագիր է ուղարկում Ամստերդամ, որտեղ նախազգուշացնում է, որ եթե տեղի հյուպատոսը չփոխվի, ապա հայ, հույն և հրեա վաճառականները, տեսնելով, որ շարունակ նեղություններ են ենթարկվում, կարող են հոլանդական նավերին այլևս ապրանք չտալ[62]։ Ի վերջո, 1660 թ. Նիդերլանդների կառավարությունը պաշտոնից ազատում է հյուպատոսին և նրա փոխարեն նշանակում ոմն Դուկկա դի Ջովաննիի։

Լևանտում հայ վաճառականները ծավալուն առևտուր ունեին նաև Ֆրանսիայի հետ։ Միջերկրական ծովը ավանդաբար կարևոր տեղ էր գրավում ֆրանսիական քաղաքականության մեջ, և Լևանտի հետ առևտուրը կենսականորեն կարևոր էր Ֆրանսիայի համար[63]։ Այդ պատճառով ֆրանսիական բացարձակապետությունը եռանդուն կերպով աջակցում էր իր վաճառականներին։ Կարդինալ Ռիշելիի են նույնիսկ ստեղծեց Լևանտի գործերով պետական քարտուղարի պաշտոն։ XVII դարի 30-ական թթ. միայն Մարսելից, որը հանդիսանում էր Ֆրանսիայի արևելյան ծովային դարպասը, Լևանտ էր ժամանում տարեկան մինչև 70 նավ[64]։

Լևանտը հատկապես իրանա-ֆրանսիական առևտրի խոշորագույն կենտրոն էր։ Մինչև 1664 թ. Ֆրանսիայի ուղղակի առևտրական հարաբերությունները Իրանի հետ գործնականում հավասար էին զրոյի։ Այդ պատճառով Ֆրանսիան, որը հանդիսանում էր իրանական հում մետաքսի խոշոր ներմուծող, այն ձեռք էր բերում Լևանտում և համարյա բացառապես հայ վաճառականներից։ Սակայն ամբողջ խնդիրն այն էր, որ հայերի առևտուրը Մարսելի հետ չէր սահմանափակվում լոկ հում մետաքսով։ Նրանք այդ քաղաքն էին ներմուծում և արտահանում բազմապիսի ապրանքներ, որոնց առևտրով զբաղվում էին նաև ֆրանսիացի վաճառականները։ Հետևաբար հայ խոջաները հանդես էին գալիս որպես վերջիններիս մրցակիցներ։ Թե որքանով էր լուրջ այդ մրցակցությունը, երևում է հետևյալ փաստից. Մարսելի առևտրական պալատի բողոքների հիման վրա 1622 թ. դեկտեմբերի 10-ին քաղաքապետարանը հրապարակեց մի հրամանագիր, համաձայն որի ֆրանսիական նավերի նավապետներին խստիվ արգելվում էր Լևանտից Մարսել և Մարսելից Լևանտ տեղափոխել հայ վաճառականների ապրանքները։ Ընդ որում հրամանը խախտող նավապետները ենթակա էին տուգանքի 10 հազար ոսկի գումարով։ Նույնատիպ հրամանագրեր հրապարակվեցին նաև Պրովանսի և Տուլոնի իշխանությունների կողմից[65]։

Ֆրանսիական նավահանգիստների փակվելը ծանր հարված էր հայ վաճառականների համար։ Այդ պատճառով ջուղայեցի խոջաները գործի են լծվում դրությունը շտկելու համար։ 1628 թ. Նոր Ջուղայի քաղաքապետ («բալանթար») խոջա Նազարը կազմակերպում է ֆրանսիական կապուցինյան միաբանության անդամ Պացիֆիկի հանդիպումը շահ Աբբաս I-ի հետ։ Ի վարձատրումն իր միջնորդության ֆրանսիական արքունիքի առջև, Պացիֆիկը թույլտվություն է խնդրում Սպահանում կապուցինյան միաբանության միսիա կազմակերպելու վերաբերյալ[66]։ Ստանալով շահի համաձայնությունը, ֆրանսիացի հոգևորականը կատարում է իր խոստումը։ 1629 թ. նոյեմբերի 23-ին հրապարակվում է Լյուդովիկոս XIII-ի և կարդինալ Ռիշելիեի հատուկ արտոնագիրը հայ վաճառականներին՝ Մարսել ազատ մուտք ու ելք ունենալու իրավունքի մասին[67]։

---

62 Նույն տեղում, էջ 32։

63 Տե՛ս Gay de Montanella R. Valoracion hispanica en el Mediterraneo, Marseile, 1952, p. 118.

64 G. Tongas. Les relations de la France avec l'Empire Ottoman durant la premiere moitié du XVII siècle. Toulouse, 1942, p. 199.

65 Տե՛ս Fr. Macler. Notes de manuscrits arméniens ou relatifs aux Arméniens, vus dans quelques bibliotèques de la peninsule ibérique et du sud-est de la France.— Revue des Etudes Arméniennes, t. II, Paris, 1922.

66 P. Pacifique. Relation du voyage en Perse. Lille, 1632, t. II, p. 423.

67 Ղ. Ալիշան. Սիսական. Վենետիկ, 1893, էջ 456։

Սակայն այս վիճակը երկար չտևեց։ 1634 և 1650 թթ. Մարսելի իշխանությունները վերստին սահմանափակեցին հայ վաճառականների առևտուրը՝ նրանց ապրանքների նկատմամբ սահմանելով 50 տոկոսի մաքսատուրք[68]։ Ի դեպ, ֆրանսիական իշխանությունների այս միջոցառումները ուղղված էին ոչ միայն հայ վաճառականների, այլև լևանտյան առևտրի մեջ իրենց հիմնական մրցակից Հոլանդիայի դեմ, որովհետև վերջինս հայ վաճառականներից Մարսելում ձեռք էր բերում մեծ քանակությամբ արևելյան ապրանքներ և նրանց վաճառում հոլանդական մահուդ։

Սակայն Մարսելը հայ վաճառականների առջև փակելու պատճառով Ֆրանսիայի արևելյան առևտուրը ևս կարճ ժամանակամիջոցի ընթացքում նշանակալի վնասներ կրեց։ Այդ պատճառով 1669 թ. Կոլբերը ստիպված էր վերականգնել Մարսելի ազատ քաղաք լինելու սուրատուրը («պորտո-ֆրանկո»[69])։ Ազատ քաղաքներ հայտարարվեցին նաև Տուլոնը, Դյունկերկը, Բորդոն, Լա-Ռոշելը, Նանտը և այլն։ Այսպիսով, հայ վաճառականների առջև կրկին բացվեց Լևանտ—Ֆրանսիա առևտրական երթուղին։ Ֆրանսիայի հետ նրանց առևտուրը խորախուսելու նպատակով Կոլբերը հատկացրեց այնպիսի արտոնություններ, որպիսիք «չուներ արևելյան ազգերից և ոչ մեկը»[70]։ Իր հերթին, Լյուդովիկոս XIV-ը, 1687 թ. Զմյուռնիայի ֆրանսիական հյուպատոսին հրամայեց, որպեսզի հայ վաճառականներին հատուկ հովանավորություն ցույց տրվի[71]։

Ֆրանսիական կառավարության այս մեղմ քաղաքականության ներքին դրդապատճառներն այն էին, որ Եվրոպայում պատերազմներից ու բուն Ֆրանսիայի ներսում ծավալվող բարդ իրադարձություններից ուժասպառ եղած երկիրը ի վիճակի չէր Լևանտում առանձնակի եռանդ դրսևորել առևտրի բնագավառում։ Հայ առևտրական կապիտալի նկատմամբ Ֆրանսիայի այս քաղաքականությունը շարունակվեց մինչև XVII դարի վերջը։

Հայ վաճառականների առևտուրը եվրոպական երկրների հետ չէր սահմանափակվում լոկ լևանտյան քաղաքներով։ Արևելյան առևտրի գլխավոր ուղիները դեպի Արևմուտք անցնում էին Միջերկրական ծովով։ Ապրանքները բարձելով եվրոպական նավերի վրա, հայ վաճառականները դրանք տեղափոխում էին Ֆրանսիա, Իսպանիա և այլն, որտեղից ցամաքային ու գետային ճանապարհներով նաև Գերմանիա, Ավստրիա, Լեհաստան, Սկանդինավյան երկրներ և այլն։ Իզուր չէ, որ ֆրանսիացի Տուրնեֆորը գրում էր, որ հայ վաճառականները «ոչ միայն հանդիսանում են Լևանտի առևտրի տերը, այլև նշանակալից չափով նաև Եվրոպայի առավել խոշոր քաղաքների առևտրի տերը»[72]։

Հետաքրքիր տեղեկություններ կան այն մասին, որ առավել խոշոր հայ խոջաները իրենց տրամադրության տակ ունեին նաև սեփական նավեր։ Ղ. Ալիշանը, օրինակ, հիշատակում է մի շարք վենետիկցի նավատեր հայերի անուններ՝ Զանդ, որի նավը կոչվում էր Spirito Santo (Սուրբ հոգի), Շահումյաններ և Նուրիքյաններ, որոնց նավերն էին Ս. Խաչ և Տիրամայր Շնորհաց (Madonna della Grazia), Ասլան Պողոս (նավը Ս. Հովսեփ), Պետրոս Սինան (նավը Galera S. Giorgio), Առաքել Դերաքյան, նավը Տիրամայր խաղաղարար (Madonna della Pace) և այլն[73]։

Մեզ են հասել նաև մի շարք հայ նավատերերի նավերի անվանումներ,

---

68 H. Samuelian. Les Arméniens, en France depuis les origines, jusqu'à nos jours, Le Foyer, III-e année, № 35, Paris, 1er Avril, 1930.

69 Ch. Périgot. Histoire du commerce Français. Paris (առ. թվ.), p. 207—208.

70 Poullet. Op. cit., p. 436.

71 Հայկ Տեր-Աստվածատրյանց. Հայ վաճառականությունը Ռուսիայում. Պարիս, 1906, էջ 47։

72 Pitton de Tournefort. Relation d'un voyage du Levant. Paris, 1718, t. II, Lettre XX, p. 158.

73 Ղ. Ալիշան. Հայ-Վենետ. Վենետիկ, 1896, էջ 503—504։

որոնք զբաղվում էին Լևանտի և Հոլանդիայի միջև առևտրով։ Դրանք են Coopman van Armenien (Հայաստանի վաճառական). Coopman van Persien (Պարսկաստանի վաճառական)[74]։

Զաքարիա Ագուլեցու «Օրագրությունում» մենք հանդիպում ենք փաստերի, ըստ որոնց հայ վաճառականների համար նավով Եվրոպա մեկնելը, առանց ուղեկցող ռազմանավերի, կապված էր մեծ դժվարությունների հետ, որովհետև նրանց նավերը ենթարկվում էին ծովահենների հարձակումներին[75]։ Ժամանակակիցները ծովահենությունը անվանել են «միջերկրածովյան առևտրի պատուհաս»։ Միայն Հյուսիսային Աֆրիկայի ծովահենային հանրապետությունները իրենց տրամադրության տակ ունեին 150 նավ, հազար թնդանոթ և 20 հազար նավաստի[76]։ Միջերկրական ծովում ծովահենությամբ էին զբաղվում բոլոր պետությունները։ Նույնիսկ կարդինալ Ռիշելիեն հրամայել էր ֆրանսիական նավատորմի հրամանատար դե Սարդիին գրավել բոլոր երկրների նավերը։ Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա ծովահենությամբ էր զբաղվում նույնիսկ սուլթանական նավատորմը։ Ժամանակակիցների վկայությամբ, միայն 1609—1621 թթ. ծովահենության պատճառով եվրոպական վաճառականները կորցրել էին ավելի քան 1500 նավ[77]։

Այսպիսով, պետականության բացակայության պայմաններում, զուրկ ամեն տեսակի հովանավորությունից, հայ առևտրական կապիտալը եվրոպական արդյունաբերական երկրների բուրժուազիայի մրցակցության պայմաններում XVII դարում հանդես էր գալիս որպես կարևոր գործոն և կապող օղակ Արևելքի ու Արևմուտքի միջև միջազգային ապրանքափոխանակության մեջ։ «Հայերի գործունեության այդ կողմը (այսինքն առևտուրը— Վ. Բ.),— նշում է անվանի պատմաբան Ն. Ադոնցը,— սերտորեն կապված է համաշխարհային կարևորություն ունեցող պրոբլեմների հետ։ Համաշխարհային շուկայում հայերի հայտնվելը ժամանակակից քաղաքակրթության հիմքում ընկած նոր ոգու դժվարին փորձությունն է, որը մատնանշում է Հայաստանի կարևորությունը որպես նոր աշխարհի առաջացման գործոն՝ արտացոլված Արևելքի և Արևմուտքի փոխադարձ հարաբերություններում»[78]։

---

[74] Խոսքը իրանահայ, առավելապես Նորջուղայեցի հայ վաճառականների մասին է։ Հոլանդիայում առևտրական ելևմտից մատյաններում պարսկահայ վաճառականները արձանագրվում էին որպես «քրիստոնյա պարսիկներ»։ Պարսիկ կոչումն այնքան տարածված էր, որ Հոլանդացի պատագիրները Ամստերդամի հայոց եկեղեցին, որ ջուղայեցիներն էին կառուցել, ուղղակի պարսկական եկեղեցի էին կոչում (Ա. Ս ա ր ո ւ հ ա ն. Նշվ. աշխ., էջ 49—50)։

[75] Զ ա ք ա ր ի ա Ա գ ո ւ լ ե ց ի. Օրագրություն. Երևան, 1938, էջ 51։

[76] G. Clark. The Barbary Corsairse in the XVII century.—Cambridge Historical Journal, 1944. v. 8, № 1, p 26.

[77] G. Fischer. Barbary Legend. War, Trade and Piracy in North Africa 1415—1830. Oxford, 1957, p. 176.

[78] Из истории Армянского вопроса.— Научно-информационный бюллетень сектора Научной информации АН АрмССР, серия III, Ереван, 1984, с. 48.

АРМЯНЕ И ЛЕВАНТИНСКАЯ ТОРГОВЛЯ В XVII ВЕКЕ

Доктор ист. наук В. А. БАЙБУРТЯН

Резюме

Со времен существования Киликийского армянского государства армянские купцы играли выдающуюся роль в торговле стран восточного Средиземноморья—Леванта. Не ограничиваясь рамками этого региона, они принимали заметное участие также в международном товарообмене между Европой и Азией. Посредническая роль армянского купечества в европейско-азиатской торговле особенно возросла после взятия турками Константинополя в 1453 г., когда страны Западной Европы и отчасти Леванта почти совершенно лишились возможности поддерживать регулярные торговые связи со странами Среднего Востока, Китая, Индийского субконтинента. Начиная с XVI в. и особенно в XVII в. в торговле через сухопутные караванные дороги Малой Азии армянские купцы не имели серьезных конкурентов, а международная торговля шелком-сырцом по указанному пути находилась исключительно в их руках. В условиях ожесточенной конкурентной борьбы между главными западными державами—Францией, Англией и Голландией, армянское купечество проявило большую гибкость для сохранения своих позиций в левантинской торговле. Существование в Алеппо, Смирне, Константинополе и других торговых центрах Леванта крупных армянских колоний значительно облегчало международные торговые операции армянских купцов и повышало их конкурентоспособность.